**Արձանագրություն N 4**
**ՋԿ-ԲՄԽԾՁԲ-24/4-Ն ծածկագրով ընթացակարգի**
**գնահատող հանձնաժողովի նիստի**

30 ապրիլի 2024թ.

ք. Երևան

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Պողոսյանը,

Հանձնաժողովի անդամներ Ա. Օհանյանը, Ա. Սիմոնյանը, Ս. Ասրյանը, Գ. Տեր-Գրիգորյանը և Տ. Վարդանյանը:

Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

**Հայտերի բացման վերաբերյալ**

---

Ջրային կոմիտեի կարիքների համար ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ջրվեժ և Ձորաղբյուր բնակավայրերի (այգեգործական տարածք) ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցման տեխնիկատնտեսական հիմնավորում և նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման ՋԿ-ԲՄԽԾՁԲ-24/4-Ն ծածկագրով ընթացակարգի հայտերը էլեկտրոնային ձևով www.armeps.am կայքի միջոցով բացվել են 2024 թվականի ապրիլի 03-ին, ժամը 16:30-ին /հրապարակումը՝ 04.03.2024թ./:

Ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիմքով:

**ՋԿ-ԲՄԽԾՁԲ-24/4-Ն ծածկագրով ընթացակարգին մասնակցության հայտ է (են) ներկայացրել հետևյալ մասնակից (ները)**

| Մասնակցի անվանումը | հասցե, հեռախոսահամար | Էլեկտրոնային հասցե |
|---|---|---|
| «ԲԻՄ ԻՆԺԵՆԵՐԻՆԳ» ՍՊԸ | Երևան, Ավան-Առինջ 1-ին միկրո 1/7,5, հեռ. 091333032 | tender@bime.am |
| «ՋԻՆՋ» ՍՊԸ | ք. Երևան, 0052, Քանաքեռ 11-րդ փող., տ. 57, հեռ. (+374)11 24 60 23 | info@jinjconsult.com |
| «Շինմաստեր» ՍՊԸ «Ակադեմիկոս Ի.Վ. Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՓԲԸ կոնսորցիում | ք. Երևան, Երզնկյան 21 շ. բն.26 հեռ. 098410404, ք. Երևան, Արմենակյան 125, հեռ. 043040804 | office@shinmaster.am , jhhi@jhhi.am |

**Մասնակցի (ների) գնային առաջարկը**

---

ՀՀ դրամ

| | Մասնակցի անվանումը | Արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|
| **Չափաբաժին 1** Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում - ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ջրվեժ և Ձորաղբյուր բնակավայրերի (այգեգործական տարածք) ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցման տեխնիկատնտեսական հիմնավորում և նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման խորհրդատվական ծառայություններ պլանավորված (կանխատեսվող) գնման ընդհանուր գին 100 000 000 | | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1 | «ԲԻՄ ԻՆԺԵՆԵՐԻՆԳ» ՍՊԸ | 59 000 000 | | 59 000 000 |
| 2 | «ՋԻՆՋ» ՍՊԸ | 77 800 000 | 15 560 000 | 93 360 000 |
| 3 | «Շինմաստեր» ՍՊԸ «Ակադեմիկոս Ի.Վ. Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՓԲԸ կոնսորցիում | 74 000 000 | 14 800 000 | 88 800 000 |

**Անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ**

23.04.2024թ.-25.04.2024թ. գնահատող հանձնաժողովի նիստում արձանագրվել են անհամապատասխանություններ ՋԿ-ԲՄԽԾՁԲ-24/4-Ն ծածկագրով Հրավերի պահանջների նկատմամբ հանձնաժողովը կասեցրել է նիստը մեկ աշխատանքային օրով և առաջարկել է մինչև կասեցման ժամկետի ավարտը այն է 26.04.2024թ. շտկել անհամապատասխանությունները (Համաձայն «ՋԿ-ԲՄԽԾՁԲ-24/4-Ն» ծածկագրով ընթացակարգի 8.9 կետի).

**Մասնակից(ներ)ի կողմից ներկայացված բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայությունը և յուրաքանչյուր հայտի փաստաթղթերի համապատասխանությունը հրավերի պահանջներին**

ՋԿ-ԲՄԽԾՁԲ-24/4-Ն ծածկագրով ընթացակարգի

**Մասնակից «ԲԻՄ ԻՆԺԵՆԵՐԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում.**

- բացակայում է աշխատակազմի մասին տվյալները՝ համաձայն սույն հրավերի Հավելված N 1.2-ի և կից անհրաժեշտ նյութերը /աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ մատուցվելիք ծառայություններում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների ռեզյումեները, անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթեր, ինչպես նաև լիցենզավորման մասին օրենսդրությամբ պահնջված լինելու դեպքում համապատասխան լիցենզիա (CV, դիպլոմ, վկայագիր, հավաստագիր, արտոնագիր, լիցենզիա և այլն) պատճենները (բնօրինակից արտատպված):

- բացակայում է «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող անհրաժեշտ նյութերը /Նախկին 7 տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացված առնվազն 1 նմանատիպ պայմանագիր: Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում խմելու ջրի ջրատարների, կոյուղու կոլեկտորների կառուցման, վերակառուցման, վերականգնման նախագծային աշխատանքները, ընդ որում կատարված աշխատանքների 1 պայմանագրի արժեքը պետք է լինի ոչ պակաս քան սույն առաջադրանքի համար նախատեսված գումարի 20%/:

**«Շինմաստեր» ՍՊԸ «Ակադեմիկոս Ի.Վ. Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՓԲԸ կոնսորցիումի կողմից ներկայացված հայտում.**

- աշխատակազմի մասին տվյալները՝ համաձայն սույն հրավերի Հավելված N 1.2-ի /Հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների/ «գործատուի անվանունը» սյունակը լրացված է թերի՝ պետք է լրացվի տվյալ ժամանակահատվածում տվյալ գործի գործատուի անվանումը:

- Կողմերի միջև 01.04.2024թ-ին կնքվել է «Համատեղ գործունեության» պայմանագիր, որով տարանջատված են կողմերի (Գ 1 և Գ2) պարտավորությունները, սակայն ՎԳՊ-ի մասով սահմանված է ընդամենը «սոցիալական խնդիր» ինչը կարծում ենք հավելյալ ճշտգրման և նույնականացման կարիք ունի:

- Նույն համաձայնագրի Գ 2 կողմի ID քարտի վավերականության ժամկետն ավարտված է եղել դեռևս 2023 թվականին, անհրաժեշտ է ներկայացնել անձնագիր կամ վավերական ID քարտ:

- աշխատակազմի մասին տվյալները՝ համաձայն սույն հրավերի Հավելված N 1.2-ում /Հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների/ «գործունեության ոլորտը և կատարված աշխատանքները» սյունակը ոչ հիմնական փորձագետ Արևիկ Մկրտչյանի մասով լրացված է թերի՝ գործունեության ոլորտը և

կատարված աշխատանքների բացվածքը լրացված չէ, անհրաժեշտ է լրացվել և հիմնավորել /***Փորձագետ 3.*** *Վերաբնակեցման հարցերի մասնագետ,* գյուղատնտեսության, սոցիոլոգիայի, տնտեսագիտության, հումանիտար ոլորտի կրթությամբ և առնվազն 5 տարվա աշխատանքային փորձով վերաբնակեցման ծրագրերի իրականացման ոլորտում/:

**«ՋԻՆՋ» ՍՊԸ կողմից ներկայացված հայտում.**

- Հիմնական Փորձագետ 5-ի թեքնածուն ներկայացրել է քոլեջի դիպլոմ, սակայն տեխ.առաջադրանքով ներկայացված հիմնական փորձագետ 5-ի «Ճարտարագետ-նախահաշվող» պահանջվում է Ճարտարագիտության բակալավրի/մագիստրոսի կամ դիպլոմավորված ճարտարագետի կրթական աստիճանով:
- Ոչ հիմնական փորձագետ 4-ը ներկայացվել է ճարտարագետ մեխանիկ որակավորմամբ, սակայն Հրավերով սահմանված է Ճարտարագետ – *հիդրոմեխանիկ* /***Փորձագետ 4.*** *Ինժեներ-հիդրոմեխանիկ,* ճարտարագետի որակավորմամբ բակալավրի/ մագիստրոսի կամ դիպլոմավորված ճարտարագետի կրթական աստիճանով և առնվազն 5 տարվա աշխատանքային փորձով ջրային համակարգերի ուսումնասիրման, նախագծման և/կամ շինարարության/վերահսկողության նախագծերում:/:
- Ոչ հիմնական փորձագետ 3-ի որակավորումը անհրաժեշտ է ներկայացնել համաձայն Հրավերի՝ ***Փորձագետ 3.*** *Վերաբնակեցման հարցերի մասնագետ,* գյուղատնտեսության, սոցիոլոգիայի, տնտեսագիտության, հումանիտար ոլորտի կրթությամբ և առնվազն 5 տարվա աշխատանքային փորձով վերաբնակեցման ծրագրերի իրականացման ոլորտում:

**Մասնակից ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության վերաբերյալ**

---

25.04.2024թ անհամապատասխանությունների շտկման ծանուցմանն ի պատասխան «ԲԻՄ ԻՆԺԵՆԵՐԻՆԳ» ՍՊԸ-ն «Շինմաստեր» ՍՊԸ «Ակադեմիկոս Ի.Վ. Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՓԲԸ կոնսորցիումը շտկել են արձանագրված բոլոր անհամապատասխանությունները, իսկ մասնակից «ՋԻՆՋ» ՍՊԸ-ի կողմից չեն շտկվել հետևյալ անհամապատասխանությունը.

- Ոչ հիմնական փորձագետ 4-ը ներկայացվել է ճարտարագետ մեխանիկ որակավորմամբ, սակայն Հրավերով սահմանված է Ճարտարագետ – *հիդրոմեխանիկ* /***Փորձագետ 4.*** *Ինժեներ-հիդրոմեխանիկ,* ճարտարագետի որակավորմամբ բակալավրի/ մագիստրոսի կամ դիպլոմավորված ճարտարագետի կրթական աստիճանով և առնվազն 5 տարվա աշխատանքային փորձով ջրային համակարգերի ուսումնասիրման, նախագծման և/կամ շինարարության/վերահսկողության նախագծերում:/:

**Հանձնաժողովի որոշման վերաբերյալ**

---

**Հիմք ընդունելով «ՋԿ-ԲՄԽԾՁԲ-24/4-Ն» ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.10 կետը** (8.10 Եթե հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է) և սույն **Հրավերով** սահմանված պայմանը, այն է՝ **<<Ոչ գնային նվազագույն չափանիշները պարտադիր են (հրավերով սահմանված աշխատանքային փորձին, աշխատակազմին, ծառայության մատուցման առաջարկվող կարգին կամ հրավերով սահմանված ոչ գնային այլ պայմանի (պայմաններին)), հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում:>> հանձնաժողովը որոշեց.**

1. Մերժել՝ ՋԻՆՋ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:
2. Ամփոփել և հաստատել «ԲԻՄ ԻՆԺԵՆԵՐԻՆԳ» ՍՊԸ-ի և «Շինմաստեր» ՍՊԸ «Ակադեմիկոս Ի.Վ. Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՓԲԸ կոնսորցիումի գնահատման արդյունքները /Չափաբաժին 1/.

| Խորհրդատու(ներ) | գնային առաջարկների տրվող միավորներ | Տեխնիկական առաջարկի միջին գնահատական | Մասնակցին տրվող գնահատականը (տեխնիկական և ֆինանսական) |
|---|---|---|---|
| **«ԲԻՄ ԻՆԺԵՆԵՐԻՆԳ» ՍՊԸ** | | | |
| Չափաբաժին 1 | 100 | 92.75 | **94.9** |
| **Շինմաստեր» ՍՊԸ «Ակադեմիկոս Ի.Վ. Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՓԲԸ կոնսորցիում** | | | |
| Չափաբաժին 1 | 79.7 | 88.42 | **85.8** |

3. ՋԿ-ԲՄԽԾՁԲ-24/4-Ն ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել «ԲԻՄ ԻՆԺԵՆԵՐԻՆԳ» ՍՊԸ -ին և հրապարակել պայմանագիր կնքելու մասին որոշման մասին հայտարարությունը:

4. <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

5. Անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորրորդ աշխատանքային օրվա ընթացքում ծանուցել ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

**Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին**

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա, նիստերի դահլիճ:

Ընդունվել է որոշում՝ կողմ-6, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ _____ Ա. Պողոսյան

_____ Գ. Տեր-Գրիգորյան

անդամներ _____ Ա. Սիմոնյան

_____ Ս. Ասրյան

_____ Ա. Օհանյան

_____ Տ. Վարդանյան

Քարտուղար _____ Ա. Սարգսյան